ՄԱՀԱԽՕՍԱԿԱՆ

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՎԻՐՅԱԼԸ. ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Համաշխարհային պատմության մեջ Ի.-ԻԱ. դդ. սահմանը նշանավորվեց գիտատեղեկատվական դաշտի աննախադեպ արագ եւ տարերային ընդլայնմամբ, ինչն առաջ քաշեց ու զարգացրեց, այսպես կոչված, homo technicus-ին՝ մարդու, նաեւ գիտնականի մի տեսակ, որին առավելապես բնորոշ է գործնական, տեխնիկական եւ շատ դեպքերում՝ մակերեսային աշխարհայացքը: Եվ այսօր, դժբախտաբար, պատմությանն է ձուլվում գիտնական-մտավորականների այն սերունդը, որը գիտելիքն ընկալում էր որպես նպատակ ու կենսակերպ եւ ոչ զուտ մասնագիտություն ու միջոց. այդ սերունդի կրողներին արդեն մեր օրերում կարելի է կոչել «դասականներ»: Եվ ահա, նրանց վերջին ներկայացուցիչներից էր նշանավոր հայագետ, պատմաբան, պրոֆեսոր Պետրոս Հովհաննեսի Հովհաննիսյանը, ում անժամանակ մահը (2016 թ. փետրվարի 22, Երեւան) մեզ ստիպում է գոնե մի պահ մերժել մակերեսային իրականության գերիշխանությունը, կանգ առնել եւ ետ նայել:

Պ. Հովհաննիսյանի մահը մեծ կորուստ է ոչ միայն հայագիտության եւ ընդհանրապես հայկական հումանիտար մտքի, այլ նաեւ Հայոց Ս. Եկեղեցու համար, քանի որ, սկսած Հայաստանի անկախության առաջին իսկ տարիներից, մեծ հայագետի կյանքն ու գործունեությունը անմիջականորեն առնչվում էր եկեղեցական գիտակրթական հաստատությունների՝ Սեւանի Վազգենյան հոգեւոր դպրանոցի (1995-1999 թթ.), Ս. Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանի (աստվածաբանական համալսարան) (1999-2016 թթ.), ինչպես նաեւ «Էջմիածին» հանդեսի հետ:

Ինչպիսի՞ն էր Պ. Հովհաննիսյանի ճանապարհը: Նա ծնվել է 1944 թ. հունիսի 22-ին Գյումրիում՝ Հայոց Մեծ եղեռնից փրկված եւ Երզնկայից գաղթած Հովհաննես Հովհաննիսյանի ընտանիքում: Միջնակարգ կրթությունը ստացել է նույն քաղաքում (1951-1961 թթ.), ապա՝ 1962 թ.

Պետրոս Հովհաննիսյան
(1944-2016)

ընդունվել է Երեւանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ՝ մասնագիտանալով հայոց պատմության ուղղությամբ: Պ. Հովհաննիսյանի ուսումնառությունն ընդհատվում է եռամյա բանակային ծառայությամբ, որից հետո նա շարունակում է համալսարանական կրթությունը: 1970 թ. ավարտելով պատմության ֆակուլտետը՝ ընդունվում է ասպիրանտուրա՝ Հայոց պատմության ամբիոն, եւ 1976 թ. պաշտպանում թեկնածուական ատենախոսություն՝ պրոֆ. Ս. Պողոսյանի ղեկավարությամբ: Պ. Հովհաննիսյանի հետագա կյանքը կենտրոնացել է նշյալ ամբիոնի շուրջ, որտեղ տարիներ շարունակ աշխատել է որպես կաբինետի վարիչ, ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր, իսկ 2013 թ. սկսած՝ ամբիոնի ղեկավար: Բացի Երեւանի պետական համալսարանից եւ Գեւորգյան հոգեւոր ճեմարանից, Պ. Հովհաննիսյանը դասախոսություններ է կարդացել նաեւ այլ հայագիտական կենտրոններում (օրինակ՝ Համազգային հայ կրթական ու մշակութային միության հայագիտական բարձրագույն հիմնարկում, Բեյրութ, 1992-1994 թթ.):

Պ. Հովհաննիսյանը դասավանդում էր «Հայոց պատմություն», «Հայոց պատմության աղբյուրագիտություն», «Հայոց Եկեղեցու պատմության աղբյուրագիտություն», «Հայկական գաղթավայրերի եւ Սփյուռքի պատմություն», «Հայագիտության պատմություն», «Մասնագիտության արդիական հիմնախնդիրներ» եւ այլ առարկաներ:

Դասախոսական գործունեությունը Պ. Հովհաննիսյանը զուգակցում էր ոչ պակաս բեղմնավոր գիտական աշխատանքի հետ, ինչի մասին են վկայում նրա 300-ից ավել հետազոտությունները (մենագրություններ, հոդվածներ, գրախոսություններ, դասագրքեր, խմբագրականներ), մասնակցությունը բազմաթիվ հանրապետական ու միջազգային գիտաժողովներին Հայաստանում եւ արտերկրում:

Պ. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունները վերաբերում էին հին ու միջնադարյան Հայաստանի եւ հայկական Սփյուռքի մշակութային ու քաղաքական պատմությանը, Հայոց Ս. Եկեղեցու անցած ճանապարհին, աղբյուրագիտության ու պատմագրության տարբեր խնդիրներին: Պ. Հովհաննիսյանի աշխատանքները հատկապես կենտրոնացած էին հետազոտության մի տեսակի վրա, որը համաշխարհային պատմագիտության լեզվով կարելի է կոչել պրոսոպոգրաֆիա՝ հասարակության զարգացման պատմության վերակազմություն՝ անհատական կենսագրությունների ուսումնասիրության միջոցով:

Հատկապես հայտնի են նրա աշխատասիրությամբ լույս տեսած «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» (Հ. Ա., 1981 եւ 2007 թթ., Հ. Բ.,

2011 թ.), «Ամենայն Հայոց կաթողիկոսներ. հանրագիտարան» (2001 թ.), «Հայ եկեղեցու հանրագիտարան», պր. Ա. (2008 թ.), «Նշանավոր ճեմարանականներ» (Հ. Ա. եւ Բ., 2005 եւ 2009 թթ.) գրքերը: Նա էական մասնակցություն է ցուցաբերել «Հայկական Սովետական Հանրագիտարան» (1974-1987 թթ.), «Հայկական համառոտ հանրագիտարան» (1990-2003 թթ.), «Հայկական հարց» (1996 թ.), «Քրիստոնյա Հայաստան» (2002 թ.), «Ո՞վ ով է» (2005-2007 թթ.) հանրագիտարանների, ինչպես նաեւ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի «Հայոց պատմություն» բազմահատորյակի (2010-2014 թթ.) ստեղծման գործում:

Պ. Հովհաննիսյանի աշխատասիրությամբ լույս են տեսել Ավետիս Պերպերյանի «Պատմութիւն Հայոց» (2009 թ.), Աշոտ Հովհաննիսյանի «Պատմագիտական ուսումնասիրություններ» (2007 թ.), Կարապետ Տեր-Մկրտչյանի «Հայոց Եկեղեցու պատմութիւն» (2012 թ.) աշխատությունները: Հատկապես հիշարժան են մատենագիտական ոճի աշխատանքները, որոնց թվում են «Հայկական հարց: Հայերի ցեղասպանությունը» (1998 թ.), «Մովսես Խորենացի. մատենագիտությունը» (2013 թ.) եւ այլ աշխատանքները: Նրա համահեղինակությամբ եւ խմբագրությամբ են կազմվել «Հայոց պատմություն» բուհական (2000 եւ 2012 թթ.), ինչպես նաեւ «Հայոց Եկեղեցու պատմություն» (2002-2013 թթ.) եւ «Հայոց պատմություն» (2003-2005 թթ.) դպրոցական դասագրքերը:

Պ. Հովհաննիսյանի գիտական հետաքրքրությունների կիզակետում էին գտնվում մեծ հայագետներ Հակոբ Մանանդյանը եւ Նիկողայոս Ադոնցը: Առաջինի գիտական ժառանգության ուսումնասիրությանը, կարելի է ասել, նա նվիրեց իր երիտասարդության, երկրորդին՝ հասունության տարիները: Մասնավորապես Հ. Մանանդյանին էր վերաբերում Պ. Հովհաննիսյանի թեկնածուական ատենախոսությունը («Միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը ակադ. Հակոբ Մանանդյանի աշխատություններում», 1976 թ.). բացի այդ, նա հասցրեց խմբագրել Հ. Մանանդյանի «Երկեր»-ի Է. եւ Ը. հատորները (2010 եւ 2011 թթ.): Ինչ վերաբերում է Ն. Ադոնցին, ապա տասնյակ հոդվածները, մի քանի մենագրությունները եւ աշխատությունների բազմահատորյակը՝ մեծաքանակ նորահայտ աշխատանքների հրապարակումով («Երկեր», Հ. Ա.-Զ., 2006-2012 թթ.), վկայում են Պ. Հովհաննիսյանի աննախադեպ ներդրման մասին:

Պ. Հովհաննիսյանը մի շարք գիտական խորհուրդների (Էջմիածնի Գեւորգյան ճեմարան (աստվածաբանական համալսարան), ԵՊՀ պատմության ֆակուլտետ, ՀՀ ազգային գրադարան) եւ խմբագրակազմերի

(«Պատմություն եւ մշակույթ», «Հայագիտությունը դպրոցում», «Հյուսիսափայլ», «Էջմիածին» հանդեսներ) անդամ էր:

«Էջմիածին» հանդեսի աշխատանքներին Պ. Հովհաննիսյանն ակտիվորեն մասնակցում էր իր խորհուրդներով, գրախոսություններով եւ հոդվածներով: Նրա հեղինակությամբ հանդեսում լույս են տեսել բազմաթիվ հոդվածներ, որոնք նվիրված են ինչպես հայագիտական տարբեր խնդիրների, այնպես էլ Հայոց Ս. Եկեղեցու եւ Գեւորգյան ճեմարանի պատմության լուսաբանմանը (հմմտ. օրինակ՝ ԺԸ. դարի կեսերի Հայոց Եկեղեցու պատմության հարցերին նվիրված՝ Նիկողայոս Ադոնցի նորահայտ հոդված-գրախոսությունը, «Էջմիածին», Ա., 2001. Վեհափառ Հայրապետի ուխտագնացությունը Դեր Զոր, «Էջմիածին», Դ., 2001. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոս. կյանքի եւ գործունեության համառոտ ուրվագիծ, «Էջմիածին», Ը., 2001. Հակոբ Մանանդյանը Գեւորգյան ճեմարանում, «Էջմիածին», Է.-Ը., 2004. Գեւորգյան ճեմարանի անցած ուղին, «Էջմիածին», ԺԱ.-ԺԲ., 2004. Բյուզանդագիտական մի նորահայտ արժեք, «Էջմիածին», Ժ.-ԺԱ., 2006. Հայաստանի առաջին Հանրապետության պետական դրոշի՝ Մարտիրոս Սարյանի նախագիծը, «Էջմիածին», Ե., 2009, եւ այլ հոդվածները):

Բացի գիտական եւ դասախոս լինելուց՝ Պ. Հովհաննիսյանը նաեւ մտավորական էր եւ հասարակական հնչեղության խնդիրների շուրջ հաճախ հանդես էր գալիս մամուլում ու զանգվածային լրատվության միջոցներով:

Այսուհանդերձ, պատահական չէ, որ գիտամանկավարժական բեղուն գործունեության համար Պ. Հովհաննիսյանն արժանացել է Հայոց Եկեղեցու բարձրագույն՝ «Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ» շքանշանին (2004 թ.), ինչպես նաեւ «Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ» կոչմանը (2009 թ.):

Պ. Հովհաննիսյանը ապրեց հարուստ եւ արժանապատիվ կյանք ու թողեց խոշոր գիտական ժառանգություն: Այս բազմաբեղուն ժառանգության մեջ, սակայն, ամենակարեւորը նրա դաստիարակած մարդկային ներուժն է. նրա աշակերտներն անպայման կշարունակեն մեծ հայագետի անավարտ թողած գործը:

ԱՐՍԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ

«Էջմիածին» հանդեսի գլխ. խմբագիր